

Ճիճոզը

աչխփոկ,
պահուրտուք,
փսփսուք,
փնտուտուք
եւ հանելուկ...

այն հնչ է, հնչ,
 հնչ, հնչ...
այն հնչ է, հնչ,
 հնչ, հնչ...

երկու պատուհան՝
ցերեկը բաց,
գիշերը գոց...

աչքը բաց,
աչքը գոց,
աչքը բաց,
տանը բաց...

աչխփոկ...
աչխփոկ եւ պահուրտուք...
աչխփոկ, պահուրտուք եւ փսփսուք...
աչխփոկ, պահուրտուք, փսփսուք եւ
փնտուտուք...
աչխփոկ, պահուրտուք, փսփսուք,
 փնտուտուք եւ հանելուկ...

այն հնչ է, հնչ,
 հնչ, հնչ...
այն հնչ է, հնչ,
 հնչ, հնչ...

խոշոր է,
ամէն բանի մէջ կը մտնէ...

քիթ,քիթ,
խոշոր քիթ...
քիթ,քիթ,
խոշոր քիթ...

քիթը վեր,
քիթը վար,
քիթը վեր,
քիթը վար,
քիթը կախ,
քիթը ծուռ,
ծուռուճուռ...

աչխփոկ...
աչխփոկ եւ պահուրտուք...
աչխփոկ, պահուրտուք եւ փսփսուք...
աչխփոկ, պահուրտուք, փսփսուք եւ
փնտուտուք...
աչխփոկ, պահուրտուք, փսփսուք,
 փնտուտուք եւ հանելուկ...

այն հնչ է, հնչ,
 հնչ, հնչ...
այն հնչ է, հնչ,
 հնչ, հնչ...

հնչ որ ըսեմ,
հնչ որ ըսէ,
մէջը կ'իյնայ...

ըսի ըսաւ,
ըսի ըսաւ,
մէջը մտաւ...
հըր մտաւ...
ականջը մտաւ...

Ճիճոզը

ականջը սուր,
ականջը ծանր...

աչխփուկ...

աչխփուկ եւ պահուրտուք...

աչխփուկ, պահուրտուք եւ փսփսուք...

աչխփուկ, պահուրտուք, փսփսուք եւ
փնտուտուք...

աչխփուկ, պահուրտուք, փսփսուք,
փնտուտուք եւ հանելուկ...

այն ինչ է, ինչ,
ինչ, ինչ...

այն ինչ է, ինչ,
ինչ, ինչ...

հինգ ճիւղով երկու ծառ՝
միշտ դալար...

աջ ձեռքը...

աջ ձեռքը եւ ձախ ձեռքը...

աջ ձեռքը,
ձախ ձեռքը,
ձեռքերը...

ձեռքերը դալար...

աչխփուկ...

աչխփուկ եւ պահուրտուք...

աչխփուկ, պահուրտուք եւ փսփսուք...

աչխփուկ, պահուրտուք, փսփսուք եւ
փնտուտուք...

աչխփուկ, պահուրտուք, փսփսուք,
փնտուտուք եւ հանելուկ...

այն ինչ է, ինչ,
ինչ, ինչ...
այն ինչ է, ինչ,
ինչ, ինչ...

գոց դուռն՝
երբ բացուի
աղմուկը կը սկսի...

(ինչ կայ չկայ, ինչ կայ չկայ...
ինչ կայ, ինչ կայ, ինչ կայ չկայ)

ըսի ըսաւ (չըսի չըսաւ)
ըսի ըսաւ (չըսի չըսաւ)

(ինչ կայ չկայ, ինչ կայ չկայ...
ինչ կայ, չկայ չկայ, ինչ կայ չկայ)

բերանը (ինչ կայ, ինչ կայ, ինչ կայ չկայ)
բերանը եւ ձեռքերը,
ականջները,
խոշոր քիթը,
աչքերը,
ահաւասիկ՝
ճիճոզը...

(ճիճոզ, ճիճոզ, ճիճոզը եկաւ...
ճիճոզ, ճիճոզ, ճիճոզը եկաւ...)

-ճիճոզ...

-հը...

-ինչո՞ւ համար խոշոր աչքեր ունիս...

-որ չար բաները տեսնեմ...

-ճ...

Ճիճոզը

-ճիճոզ...

-հը...

-ինչո՞ւ համար խոշոր քիթ ունիս...

-որ չար բաները հոտոտեմ...

-օ...

-ճիճոզ..

-հը...

-ինչո՞ւ համար խոշոր ականջներ ունիս...

-որ չար բաները լսեմ...

-օ...

-ճիճոզ...

-հը...

-ինչո՞ւ համար խոշոր ձեռքերը ունիս...

-որ չար բաները բռնեմ...

-ա՛...

-ճիճոզ...

-հը...

-ինչո՞ւ համար խոշոր բերան ունիս...

-որ չար բաները ուտեմ...

-ա՛...

-ուտեմ...

-ա՛...

ճիճոզ, ճիճոզ, ճիճոզը եկաւ...

ճիճոզ, ճիճոզ, ճիճոզը եկաւ...

չար բաները կերաւ ու ըսաւ՝

«գացէք, ըսէք

չար բաներո՛ւն

որ չըլլան,

որ չըլլայ թէ պատահին...

կամ երբ ըլլան՝

հեռո՞ւ,

հեռո՞ւ մնան

մեր այս պզտիկ աշխարհէն...»

Իսկ երբ ճիճոզը չար բան մը ուտէ,

ականջէն ծաղիկ մը կը բուսնի...

Ծաղիկ... Ծաղիկ... Ծաղիկ...